ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 12 հուլիսի 2021թ.

2021 թվականի հուլիսի 8-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության բնության պահպանության մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Արգամ Շառայանը, Ավետիք Ասոյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Զինավոր Սարգսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

2.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 105 հասցեի անշարժ գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 58 և 65 բնակարանները Միխայել Սլավիկի Մակինյանին անհատույց օտարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի

Օղակաձև փողոց 50 շենքի 76 բնակարանը Ռուզաննա Վալերիի Պարվականյանին անհատույց օգտագործման մասին:

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 18 բնակարանը Ալվարդ Հայկազի Բաբախանյանին անհատույց օգտագործման մասին:

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 36 բնակարանը Սվետլանա Արտաշի Խաչատրյանին անհատույց օգտագործման մասին:

10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 54 բնակարանը Վալոդյա Արամի Հարությունյանին անհատույց օգտագործման մասին:

11. Սոցիալական ներդրումների և փարածքային զարգացման ծրագրին մասնակցելու մասին:

Համայնքի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին՝ *Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,* հարցը ներկայացրեց Դանիել Դանիելյանը, ով տեղեկացրեց, որ սույն որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 24-ի N 123 եզրակացությունն ու Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը՝

Սույն որոշման նախագծով առաջարկվում է՝

✓ 1.Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0010-0038 ծածկագրով (վկայական N16122020-07-0021) 0.104944 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

✓ 2.Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105226170 հաշվեհամարին վճարել 1 962 137,97 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար հարյուր երեսունյոթ ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) դրամ՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի

նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության համար:

✓ 3.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ ***Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,*** հարցը ներկայացրեց Դանիել Դանիելյանը, որը տեղեկացրեց, որ սույն որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ և 30-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 01-ի N 130 եզրակացությունը:

Սույն որոշման նախագծով առաջարկվում է՝

✓ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Զրաբեր գյուղի 07-055-0206-0006 ծածկագրով (վկայական N 23062020-07-0101) 5.5523 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի:

✓ Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով

տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները.

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի հաջորդ՝ ***Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին,*** հարցի կապակցությամբ Դանիել Դանիելյանը ներկայացրեց, որ նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 01-ի N 130 եզրակացության, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման N Պ-587 պայմանագրի, N Լ-587 լեռնահատկացման ակտի, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/587 թույլտվության և «ՍԹՈՈՒՆ ԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի ու համայնքի ղեկավարի առաջարկության: Հիմք ընդունելով վերոգրյալը՝

Որոշվեց՝

Հավանություն տալ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի չորրորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կուրայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 105 հասցեի անշարժ գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին,*** նախագծի վերաբերյալ Դանիել

Դանիելյանը ներկայացրեց, որ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 57-րդ, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «ա» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով N 28062021-07-0087 սեփականության վկայականը, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 17 բնակարանի բնակիչ Վոլոդյա Ազատի Հայրապետյանի 2021 թվականի հունիսի 18-ի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Որաշման նախագծով առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 105 հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակության 39.8 քմ ներքին (51.55 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունը 258 729,45 (երկու հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր քսանինն ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) դրամով և դրանց զբաղեցրած 0.03925 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության (ծածկագիր՝ 07-003-0013-0168) հողամասը 1 133 343,75 (մեկ միլիոն հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր քառասուներեք ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 17 բնակարանի բնակիչ Վոլոդյա Ազատի Հարապետյանին:

2.Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Վոլոդյա Ազատի Հայրապետյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 105 հասցեի անշարժ գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի հաջորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին,*** նախագծի վերաբերյալ Դանիել Դանիելյանը տեղեկացրեց, որ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝ *Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին:*

Որոշվեց՝

Համանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վեցերորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 58 և 65 բնակարանները Միխայել Սլավիկի Մակինյանին անհատույց օտարելու մասին,*** հարցի կապակցությամբ Վոլոդյա Հայրապետյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 58 և 65 բնակարանների (նախկին՝ թիվ 1 հանրակացարանի թիվ 110 և 100 սենյակներ) բնակիչ Միխայել Սլավիկի Մակինյանի 2021 թվականի ապրիլի 26-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 58 և 65 բնակարանները Միխայել Սլավիկի Մակինյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից 1996 թվականի փետրվարի 2-ին տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 1-ին հանրակացարանի 100 և 110 սենյակները հատկացվել են Միխայել Սլավիկի Մակինյանի հորը՝ Սլավիկ Նիկոլայի Մակինյանին: Սլավիկ Նիկոլայի Մակինյանը և ընտանիքի մյուս անդամները հրաժարվել են բնակարանի հանդեպ իրենց իրավունքներից:

Միխայել Սլավիկի Մակինյանը հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով

զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Միխայել Սլավիկի Մակինյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14.01 քմ մակերեսով 58 բնակարանը (նախկին՝ թիվ 1 հանրակացարանի թիվ 110 սենյակ) և 13.89 քմ մակերեսով 65 բնակարանը (նախկին՝ թիվ 1 հանրակացարանի թիվ 100 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Միխայել Սլավիկի Մակինյանին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Միխայել Սլավիկի Մակինյանի կողմից:

Որոշվեց՝

Համանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 58 և 65 բնակարանները Միխայել Սլավիկի Մակինյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հաջորդ՝ «***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի՝ Օղակաձև փողոց 50 շենքի 76 բնակարանը Ռուզաննա Վալերիի Պատվականյանին անհատույց օտարելու մասին»*** հարցի վերաբերյալ Վոլոդյա Հայրապետյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենք 76 բնակարանի (նախկին՝ 4-րդ հանրակացարանի թիվ 76 սենյակ) բնակիչ Ռուզաննա Վալերիի Պատվականյանի 2021 թվականի մայիսի 10-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 76 բնակարանը Ռուզաննա Վալերիի Պատվականյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից 1996 թվականի հունիսի 26-ին տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարանի 76 սենյակը հատկացվել է Ռուզաննա Պատվականյանին: Նա հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Ռ. Պատվականյանի ընտանիքի մյուս անդամները հրաժարվել են բնակարանի հանդեպ իրենց իրավունքներից:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային

սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ռուզաննա Վալերիի Պատվականյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.54 քմ ընդհանուր մակերեսով 76 բնակարանը (նախկին՝ 4-րդ հանրակացարանի թիվ 76 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Ռուզաննա Վալերիի Պատվականյանին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռուզաննա Վալերիի Պատվականյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 76 բնակարանը Ռուզաննա Վալերիի Պատվականյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հաջորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 18 բնակարանը Ալվարդ Հայկազի Բաբախանյանին անհատույց օտարելու մասին,*** հարցի վերաբերյալ Վոլոդյա Հայրապետյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 16 սենյակի (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 18 բնակարան) բնակիչ Ալվարդ Հայկազի Բաբախանյանի 2021 թվականի հունիսի 10-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 18 բնակարանը Ալվարդ Հայկազի Բաբախանյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 16 սենյակը հատկացվել է Ալվարդ Հայկազի Բաբախանյանին:

Նա հաշվառված է և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային

սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ալվարդ Հայկազի Բաբախանյանի դիմումը ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.85 քմ ընդհանուր մակերեսով 18 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 16 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Ալվարդ Հայկազի Բաբախանյանին՝ ծնված 1953 թվականի հունիսի 01-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալվարդ Հայկազի Բաբախանյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 18 բնակարանը Ալվարդ Հայկազի Բաբախանյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի մյուս՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 36 բնակարանը Սվետլանա Արտաշի Խաչատրյանին անհատույց օտարելու մասին,*** Վոլոդյա Հայրապետյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 41, 42 սենյակների (ներկայիս՝ Օղակաձև փողոց 50 շենք 36 բնակարան) բնակիչ Սվետլանա Արտաշի Խաչատրյանի 2021 թվականի հունիսի 11-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 36 բնակարանը Սվետլանա Արտաշի Խաչատրյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից 1996թ. մայիսի 01-ին տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարան 41-42 սենյակները հատկացվել է Սվետլանա Արտաշի Հովհաննիսյանին: N 445658 ամուսնության վկայականով 1954 թվականին նա ստացել է ամուսնու ազգանունը՝ Խաչատրյան: Ընտանիքի մյուս անդամները հրաժարվել են սեփականության իրենց իրավունքից:

Նա հաշվառված և բնակվում է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սվետլանա Արտաշի Խաչատրյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.57 քմ ընդհանուր մակերեսով 36 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 41, 42 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Արտաշի Խաչատրյանին՝ ծնված 1961 թվականի հուլիսի 21-ին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սվետլանա Արտաշի Խաչատրյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 36 բնակարանը Սվետլանա Արտաշի Խաչատրյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի հաջորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 54 բնակարանը Վալոդյա Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին,*** հարցի վերաբերյալ Վոլոդյա Հայրապետյանը ներկայացրեց, որ Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N 44-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենք 54 բնակարանի (նախկին՝ 4-րդ հանրակացարանի թիվ 61 սենյակ) բնակիչ Վալոդյա Արամի Հարությունյանի 2021 թվականի հուլիսի 7-ի դիմումը և համայնքի ղեկավարին ներկայացրել է առաջարկություն Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 54 բնակարանը Վալոդյա Արամի Հարությունյանին անհատույց օտարման հարցը համայնքի ավագանուն ներկայացնելու մասին:

«Հայապակի» բաժնետիրական ընկերության կողմից տրված Օրդերով Բյուրեղավան քաղաքի 4-րդ հանրակացարանի 61 սենյակը հատկացվել է Վալոդյա Արամի Հարությունյանի մորը՝ Նոնուֆար Մելիքի Գյուլումյանին, որը մինչև մահանալը՝ 2020 թվականի դեկտեմբերի 16-ը, հաշվառված է եղել և բնակվել է նշված հասցեում:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման,

սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վալոդյա Արամի Հարությունյանի դիմումը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 22.2 քմ ընդհանուր մակերեսով 54 բնակարանը (նախկին՝ 4-րդ հանրակացարանի թիվ 61 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Վալոդյա Արամի Հարությունյանին և սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վալոդյա Ազատի Հայրապետյանի կողմից:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 54 բնակարանը Վալոդյա Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վերջին՝ ***Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու մասին,*** հարցի վերաբերյալ հանդես եկավ Սարգիս Ղազարյանը, հայտնելով, որ նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, միաժամանակ հիմք ընդունելով նաև Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիրը»: Այն վերաբերում է Բյուրեղավան համայնքում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում համայնքապատկան շենքերի, պուրակի և փողոցային լուսավորության համակարգի համար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 28 մլն դրամ, որի իրագործումը կնպաստի համայնքի զարգացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, համայնքի համաչափ զարգացմանը: Ծրագրի իրագործման ընթացքում կստեղծվեն նաև նոր ժամանակավոր աշխատատեղեր:

Որոշվեց՝

Հավանություն տալ «Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հայկ Վարդևանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Ավետիք Ասոյան